

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՂԲԱՏԻ ԴՊՐՈՑԻ ՄԻ ԳԼՈՒԽ ԳՈՐԾՈՑ

(ԳԵՏԱՇԷՆԻ ԱԻՆՏԱՐԱՆԸ)

(Շար. Սիսե 1935, էջ 191 էճ)

Այս Ապրիլի րը, նաեւ Տիգրան կոչուած, Գրիգոր և Շուշիկ Պաշտօնականների որդին էր, Վահրամի, Վասակի և Գրիգոր Համգէի եղբայրը, որ նշանաւոր հանդիսացաւ Անիի Ամենափրկիչ եկեղեցու շինութեամբ՝ կալուածներ և նուէրներ տալով և Ապուղամբէնց գողարիկ Ս. Գրիգորի նորոգութեամբ(*)։ Նա ունէր և անձնական մատենադարան, ուր գտնուել է Փատի թուղթը Ա. Զաքարիա կաթողիկոսին գրած(**)։

Բայց ամենից աւելի վաճառ, Ստանիի հետ, Կիրիկեանների ուշադրութիւնը պէտք է վայելած լինի, որպէս նրանց տոհմական գերեզմանատուն։ Կիրիկէի զուտար Մարիամ Ու. և Ու. Թուականներից մեծ յիշատակներ ունի այնտեղ. վերջին թուականին արձանագրութեան մէջ յայտնուած է, թէ «մի յուսով շինեցի զտունս աղաթից ի վերայ հանգստարանացս մեր հաւր, քուեր իմայ Ռուստօքանին մաւր իմայ Թամուրային ինձ Մարիամուս և խղրում է յիշել պզկի և զնախնի թագաւոր աղաւկանքս մեր, որ հանգուցեալ են առ զրունսս արքայ կաթողիկէիս ի քս. յս. և։ Եւ յերաւի այստեղ են Դաւիթ, Կիրիկէ, Աբաս Թագաւորներ, Կիրիկէի կնոջ Թամարի եւ նորա զուտար Ռուստօքանի գերեզմանները։ Կիրիկեանների տկարանալու շրջանին վրաս. Թագաւորները նոյնպէս բարեպաւկամ վերաբերմունք ունին զէպի Հաղբասը(***)։ ԺԲ. զարի վերջին քառորդին՝ Գէ. որդի III. ժամանակից Հաղբասը ենթարկուած էր անմիջապէս՝ ծագմամբ Արծրու-

նի՝ Մահկանաբերդի իշխաններին, որոնք այդ ժամանակից կարեւոր դեր էին կատարում Հայոց եւ Վրաց պատմութեան մէջ(*)։ Հաղբասը եւ սրանց հանգստարանն էր, այնտեղ են թաղուած Գրիգոր Ամիրս, Քուրդ Ամիրս, Խաւառս, Սասնատոհմի նշանաւոր ներկայացուցիչներն են Քուրդ ամիրայից զատ՝ Սաղուս աթաբաղ, սորա որդին Աղբուղայ, որի որմանկար պատկերը մնացած է մինչև այժմ տաճարի հարաւային պատին՝ ներսից(**)։ Այստեղ է թաղուած Դոփը, Զաքարէ և Իսանէ եղբայրների քոյրը, Քրդի քոյր աղջիկը, որի որդին և թոռնորդին Հաղբասի նշանաւոր եպիսկոպոսները եղան Յովհաննէս Ա. և Դ.։ Ուրիշ իշխանական տոհմեր եւ գերեզմանատուն ունէին, շինարարութեամբ կամ նւիրարտութեամբ կապուած Հաղբասի հետ, ինչպէս Դէսուսեանք, Ուքանանք, Վաղուսեանք եւ նոյն իսկ հեռաւոր հայ Սրբէշեանք։

Այսպիսի հովանաւորութեամբ, բնականաբար, Հաղբասը պէտք է հետզհետէ բարձր գիրք ձեռք բերէր մեր եկեղեցական նուիրարտութեան հողերը կեանքի մէջ. Ուսանողներն և Դանձակեցիներն պատմում են, թէ ինչպէս Դաւիթ Անհողինի որդին Կիրիկէն՝ Անիի Բարսեղ եպիսկոպոսին ՇԼ = 1131 թուին Աղուանից Յովսէփ կաթողիկոսի ձեռքով կաթողիկոս է ձեռնադրել տալիս Հաղբասու, իսկ իւր դրաններից Սարգսին՝ նորընծայ Բարսղի ձեռքով եպիսկոպոս նոյն վանքի(**)։ Սարգսի յաւ-

(*) Անիւան. Շիրակ. 82-84, 51-54, Կոստանեանց. Գրիգոր Մագիստրոսի թղթերը. 1910, ԺԵ. 41։

(**) Տաթևի Զեռ. N 122. «գառա թուիթ ի հնազանդան Տիգրանայ Պաշտօնական» . . . :

(***) Երզնկեան. 32-33։

(*) Տեա. Շաղաթ. հայագիտական ժողովածու. Վաղարշ. 1913. մեր Զագաւանից ժողովք. եր. 26։ Խաղարկեանք կամ Պոռնեանք. Վաղարշ. 1928. եր. 3. 6. 21. 97. 134-5։ Երզնկեան. Հնաթոս. Հարաբարայ. 22։

(**) Ուսանողների, էջմ. հրատ. 1898, 221։ Գանձ.

ընդհանուր Գեորգ, ժամանակակից և թըղթակից ներսեւ Շնորհալու 1158 թ. նորա մահարձանը դանւում է պարսպից դուրս, դէպի արեւելք՝ Անապատ կոչուած փոքրիկ եկեղեցու բազում. «Այս է հանգիստ տն. Գեորգա» արձանագրութեամբ (*)։ Սորա յաջորդն էր Բարսեղ Ա., (արձանագրութեաների մէջ 1180, 1185 և 1189 թ. թ. յիշուած) ոչ միայն իւր գեղեցկութեամբ Թաւարա թագուհու մեծարանքին արժանացած, այլ և շինարար. նորա ձեռքով գաւառապետացաւ Մարտիմ Բագրատունու իւր նախնեաց և ազգականների գերեզմանների վերայ կանգնած ողորթատունը ՈՒՂ = 1185 թ. աշին, այն երեք առաջնակարգ գեղեցկութեամբ խաչերը, որ հաստատուած են այդ շէնքի արեւելեան պատին, ապացոյց են, թէ քանդակագործութիւնը ինչպիսի՞ ազնւութեան էր հասած այդտեղ (պատկ. 10)։ Նա պատկանում էր Ուքանանց տոհմին, խնամութեամբ կապուած կիրիկեան տան հետ. նորա ազգականները գեղարուեստական, ինքնարարկան եւ այլ յիշատակներ ունին՝ Հաղարտում՝ ըստ արձանագրութեաների (**), Սորա ժամանակ էր, որ Գրիգոր Տղան թղթակցութեամբ կամենում էր համոզել՝ Հաղարտեցիներին և Սանահնեցիներին գիշող զրիք բռնել Միտիեան ինչորեք նկատմամբ եւ Լամբրոնեցիին իւր զայրոյթն էր յայտնում առ Լիւոն զբաժ թղթի մէջ (***)։

Բարսեղ յաջորդն էր Գրիգորին, որին ստորին տիտղոսն է տալիս Գանձակեցին (***)։ Զաքարիայի եւ Ռանէի ազգականը, մասնակից Լուսուայ ժողովին, հին

Ղուկ. հրատ. Թիֆլիս, 1909, 91։ Ըստ Ուսուայեցու, Ստեփանոսն է Բարսեղին ձեռնադրողը։

(*) Զեւ. էջմ. N 1687. Նաեւ N 943 1525. Եթեզգ առ ի ներսեւեք եղբարէ տն. Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի, Պատմական թղթիցն Գեորգայ արեւելեան եպիսկոպոսի առաջնորդի սուրբ ուխտին Հաղարտայ, յաղաքս հետազատեոյ առ ի ստուգութեան զպատմութի. երանելոյ նահա. տակին Սարգսի զաւարավարի մեծն։

(**) Տեւ Թեղեկեան, 57-58. 25 (կասկածելի ընթերցմամբ)։

(***) Ընդհանրական ներսիսի Շնորհալու էջմ. հրատ. 1865, 426, 433. Լամբրոնացու թագիթը՝ ընտ. քրիստոնեացոր իշխանի մեր ինքնակալութեամբ՝ Լեւոնի՝ Գրիգոր Տղայի թղթերի հետ. Վենետիկ, 1865։

(****) Գանձ. Ղուկ. հրատ. 92, 161-164.

աւանդութիւններին նախնաձանդորի եւ հակառակ նորամուծութիւնների, ինչպէս վրանի մէջ պատարագելն էր, որի առթիւ և բրածնի անել տուաւ Կիրիկալից Էկած Միսաս եպիսկոպոսին և նորա պաշտօնեաներին և գրեկեցաւ Հաղարտի առաջնորդութեանից Զաքարիայի կողմից, նորա փոխարէն Յովհաննէս Ա. ին նշանակելով՝ Յովհաննէս արդէն Գրիգորիսից առաջ կարճ ժամանակով Հաղարտի առաջնորդ էր եղած (*), բայց թողած և հետոյած էր իւր հայրենիքը՝ Սուչին, ուր ՈՒԾ = 1204 թ. եկեղեցի է շինուած և իւր եղբորը Հուսանին յանձնուած, որ Գոփի ամուսնին էր, իսկ ՈՒԶ = 1207 թ. արդէն Հաղարտումն է (**), Այս Յովհաննէսն է մեր աւետարանի յիշատակարանի նոյնանուն սարսափն, իսկ ըստ Գանձակեցու Վայր Դառութիւնի՝ առաջնորդը, որի վերայ կտրելի է իրաւամբ զմեծ շինարարը՝ մականունն աւելացնել. «բազում գործս արժանի յիշատակաց գործեաց նա ի Հաղարտ, ընդ որս և զհաշակաւոր գաւիթն եկեղեցւոյն շինեաց, որ հիացուցանէ զհետզոյն» (***), Արդա՛րեւ, Հաղարտի այս մեծ և հոյակապ գաւիթը հայ ճարտարապետութեան ամենափառաւոր կոթողներից մէկն է, իսկ զգաւթներին ճարտարապետութեան մէջ առաջինը (պատկ. 11) (****), նորա ժամանակի

(*) Երզնկեան, 24։

(**) Բաթումեպոսեան. Արցախ, Բագու. 1895. 194, Զեւ. էջմ. N 203 194, 254ա։

(***) Գանձ. 16A, տ. և 92։

(****) Մեր նկատողութեան տեսակից մէջ ենք բերում առաջին տպագրութեան տակ ազգայն յուլիան եւ մտքերի նկարագրութիւնը. ընթաց (1925, 26 0դ.) մեծ ժամատանն էր աշխատում, իսկ և բարձր վայելքի բոլորներն ունեցաւ այս հոյակապ շէնքի աւելի մանրամասն դիտողութեան ժամանակ, Հաղարտը պէտք է ունենայ իւր պատմութիւնը, ճարտարապետութեան, դարաշարանքի, արձանագրական յիշատակարանների, պատմաբանականներ, որմանկարչութեան մի թանգարան է սաւ կը կամենայ արդէն և աշխատել երկա՛ր, երկա՛ր, մինչև որ կարողանայ ի իսկումը գաղափար տալ այն դեղարուեստական փառաւոր անցիկի մասին, որի տխուր անացողներն ենք մենք այժմ։ Միջոցներն են պէտք չարատիւ, լուսանկարչութեան, որմանկարչութեան արտանկարչութեան, ճարտարապետական մասերը չափագրելու և զձագրելու,՝ արձանագրութիւնները նոյնահանութեամբ կործանից փրկելու, զարգացնողականների ժամանակա-

ուրիշ հրեայթյանի մասին չենք ուզում կանգ առնել, նրա թից շատ չհեռանալու համար: Նա թաղում է Գեորգ Խաչատուրյանի գերեզմանին կից և վերան իւր գեղարուեստասէր ճաշակի համապատասխան, ճարտարաքանդակ մի աւելի մեծ խաչարձան կանգնած, անկունաձև ճակատին «Յ Այս է հանգիստ ար. Յոհաննիսի» գրումը (*):

Նորա յաջորդն էր Յովհաննէս Բ. Իւր հղբորդին, որ 1233 թուին շինեց Կայանոյ բերդը՝ տաճարի հետ միասին, Գրամա-

նորդների մէջ, որի կարեւոր գործերն են Երկյարկանի զանգակատունը (պատկ. 12) ՈՂԳ = 1244 թուին և Համազասպ կոչումով մեծ և սքանչելի՝ ժամատունը ԶԲ-ՉԶ = 1253-1257 թ. (պատկ. 13) (*), Վերջին թուականին մոտ Համազասպը և նորան յաջորդեց Յովհաննէս Դ. Դոփեան՝ գիտութեան, արուեստի, ժանրի պայծառութեան մեծ աշխատանքներից մէկը:

Այսպիսի գիրքի եւ զարգացման համընթաց էր եւ մատենագրութեան ու ձե-



(Պատկեր 11)

նաւ քեռոյն իմոյ իւանէի և որդոյ իւրո Աւազկին և Շահնշահի որդոյ Զարարէի» (**), իսկ սորա յաջորդ Յովհաննէս Գ-ի կարճատև Խաչատուրյան թիւնից յետոյ, որդի Աղաթաթանայ, Կիւրիկեան Բաղդատունիներից, Տ. Համազասպ (1243 - 1257 ըստ արձանագրութիւնների) (***), երկրորդ մեծ և գեղարուեստասէր անձը Հաղբատի տաճար-

գրութիւն կազմելու և սերտ աղբիւր մանրանկարչութեան հետ ցուցադրելու, բայց եւ ինչ՞եմ, ազգատ, օրական ծախսերս հոգալ չեմ կարող և մտածում եմ շուտ հեռանալ: Այստեղ պէտք է նստիլ մէկ երկու, երեք ամիս մասնագէտ աշխատակիցների հետ:»

(*) Համ. Երզնկեան, 64:

(**) Համ. Երզնկ. 72: (***) Գանձ. 93:


ռազարկան արուեստի զարգացումը Հաղբատում: Արեւելեան Հայաստանի ԺԲ. դարի և ԺԳ-ի առաջին կիսի նշանաւոր հեղինակների մեծագոյն մասը Հաղբատից են կամ Հաղբատի հետ կապուած. Յովհաննէս Սուրբաւազ վարդապետի ընդարձակ և բազմապիսի գործունէութիւնը մատենագրական-գիտական-վարժապետական առարկայիցում այդ զարգացման բարձունքներից մէկն է կապում. Նորա աշակերտներն են Երեմիա Անձրեկի, Սալատուր, Գրիգոր, Յովհաննէս և Սամուէլ Անեցիները (**),

(*) Գանձ. 93: Համ. Երզնկեան. 51, 38:

(**) Սամուէլ Անեցի. Կրատ. էջմ. 128: Վարդան, Մոսկուա. 1861, 159:

առաջինը իբրեւ վարժապետ Անիում եւ երկրորդը յայտնի ժամանակագիրը, Նորա ժամանակակից վարդապետներն էին նալն վաճառու Դաւիթ Ալաւկայ որդի, որ գրեաց զկանոնական օրինացրութիւնս գեղեցկայարմարս եւ պիտանացօս ի խնդրոյ քահանայի միջ, որում անուն էր Արքայութիւնս. և Գրիգոր որդի Թոքակերի. վերջին երկուսը թղթակցում են Գրիգորիս Գ. Պաշտօնաւան հետ^(*): ԺԲ. գարի վեր-

ժակացողացն եւ ինքն էլ կազմել ՈՂԲ = 1243 թուին^(*): Վարդանը Հաղարտեցին է, Շնորհալու ժամանակակից՝ հեղինակ Պատհառաց գրքի, որ հասել է մեզ, նորա Տիրացու եւ Յովսէփ աշակերտների արտագրութեամբ, ուսուցչի մահուանից յետոյ՝ 1267 թուին^(**): Չպէտք է շփոթել սորան Վարդան պատմիչի հետ, որ սրանց կրթասեր ժամանակակիցն է: Դաւիթ վարդապետը Բոբայրեցին է, գարձեալ հեղինակ



(Պատկեր 12)

ջին և ԺԳ-ի առաջին քառորդներին Հաղարտում նշանաւոր էին Իգնատիոս Բուսմամբ հռչակեալս, Պետրոս, Վարդան եւ Դաւիթ վարդապետները^(**): Դուքէ նոյն լինի այս Պետրոս վարդապետի հետ ձեռքով Պետրոս սպասաւոր սր. Նշանիս Հաղարտայ», որ ղրգծանաւք սիրոյս» Յովհաննէս կրօնաւոր քահանային գրել է տուել Դաւթի սահմանաց գիրքը ղառ ի յաւստմն

Պատհառաց գրքի և ուրիշ աշխատութիւնների, բայց նաև 22-ի ստացող. անձամբ արտագրել է Գրիգոր աստուածաբանի ղի ձեռնդն քի. », և Առ օրս » եւ « Յաղագոս Եւնովիոսացն եւ այլոցն շար աղանդից » աշխատութիւնները եւ արտագրել տուել Դոշ Մխիթարի Երեմիայի մեկնութիւնը, և զի անպարապ եղեալ իմոյս անձին ի ժա-

(*) Վարդան. 159: Գանձ. 107, 188:

(**) Հնդհ. էջմ. հրատ. 1865. 427 և Գանձ. 162,

(*) Ձեռ. էջմ. N 1890 | 1747. 121բ:

(**) Ձեռ. էջմ. N 4139 (բերում ճաթեից N 9) 516բ:

մանկ և զբռնել զսա, այլ և այլուժ տըխ-
մարաց ետու զծիլ և ապաշու ունիմ, թէ.
պէտ և ուղղեցի յետոյ», վերջում մի պատ.
մական կարեոր յիշատակարան աւելացե-
լով. Օրբէլիանց ապստամբութեան մասին
ընդգէմ Գէորգի III-ի (*): Սաղմոսի մեկ-
նութեան հեղինակ վարդանը գրել է «շար-
ժիտլ ի հոգւոյն սրբոյ ևւ յարհիպանէն
Հաղբատայ և յաշակերտաց իւրոց», ընդ-
օրինակութիւնը կատարուած դարձեալ
նոյն Տիրացու գրչի ձեռքով (**). զժուար
է մեկ ասել, թէ Հաղբատի այս արհին Յով-

ուխտին Սանահինն», ինչպէս և Յանեցու
վկայարանութիւնը (*): Իսկ Յովհաննէս Դ.
Դոփեանը սրբագրել է Վարդանի հնգա-
մատեանի այս մեկնութիւնը, որ և Գէորգ
Սկեռացու աշակերտ Երեմիոն 1296 թ.
ընդօրինակել տալով Աւշին գրչի ձեռքով,
բերում է և այդ օրինակի յիշատակարա-
նը. «յիշման բարոյ արժանաւորն և զմե-
ծապատիւ արհիւպիսկոպոսն մեծահաշակ
սր. ուխտին Հաղբատայ զսր. Յոհաննէս,
որ զաւրինակս էր սրբագրեալ և զնոր(ին
ձե)ռասուն զեղբաւորորդին հարազա(տ) Սար-



(Պատկեր 13)

հաննէս առաջինն է, թէ Յովհաննէս Դ.
Դոփեանը, որովհետեւ պարզուած չէ թէ
ա՛ր Վարդանն է հեղինակը: Արարածոց
մեկնութեան հեղինակ վարդանը գրել է
իւր աշխատութիւնը օր թվիս 924 (= 1261)
ի խնդրոյ արհիպան տն. Համազասպայ և
վարդապետին Դրիգորի փակակալին սր.

զիս քահանայ, որ ի վարժս կրթ(ութե.)
բանի է պարապեալ, որ և շնորհաց իսկ
զաւրինակս» (**):

ԳԱՐԵԳԻՆ ԱՐԲԵՊՍ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

(Շարունակելի)

(*) Զեռ. էջմ. N 163 | 260. 233 ա. և N 913 նժ.:
Թորգոմ արքեպիսկոպոսի ծուց. Սեբաստ. Սուրբ
Նշանի 22. N 153: Գերեզմանը Հաղբատումն է:
(**) Զեռ. էջմ. N 1204 | 1119:

(*) Զեռ. էջմ. N 1204 | 1119 և N 920 նժ.:

(**) Զեռ. էջմ. N 2604. 186 ա.: Զեռ. յիշում
նորա ընդարձակ գործունէութիւնն առ հասա-
րակ, ներկայ աշխատութեան չբնից դուրս
լինելով: